ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/19

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 25.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել սոցիալական ապահովության ծառայության 22.04.2019թ.-ի թիվ 3 «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով արձանագրությամբ «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ին 1-ին տեղ զբաղեցնելու որոշումը,
2. Պարտավորեցնել շտկում ուզել «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ից, կամ «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ի հայտը համարել անբավարար:

Բողոքներ քննող անձի 25.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 02.05.2019թ. և 16.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.05.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.05.2019թ.-ին:

2. «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 03-ին սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար հայտարարվել է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով մրցույթ: 2019թ-ի ապրիլի 11-ին ՀՀ Ֆինանսների նախարարության էլեկտրոնային armeps համակարգի միջոցով տեղի է ունեցել հրավերի մասնակիցների հայտերի բացումը:

Հրավերի պահանջներին բավարարող հայտեր են ներկայացրել <<ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ>> Ա/Ձ-ն՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, <<Մեսրոպ Աղազարյան Վիգենի>> Ա/Ձ-ն 1288000 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, <<Վահե Խաչատրյան Հայկի>> Ա/Ձ-ն 390600 /երեք հարյուր ինսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով,

Սոցիալական ապահովության ծառայության 22.04.2019թ.-ի թիվ 3 «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով արձանագրությամբ 1-ին տեղ գբաղեցնող է ճանաչվել <<Վահե Խաչատրյան Հայկի>> Ա/Ձ-ն, 2-րդ տեղ , << Մնսրոպ Ադազարյան Վիգենի >> Ա/Ձ-ն և 3-րդ տեղ <<ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ>> Ա/Ձ-ն, սակայն ցանկանում եմ հայտնել, որ հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 1-ին տեղ զբաղեցրած << Վահե Խաչատրյան Հայկի >> Ա/Ձ-ն չի լրացրել հրավերի հավելված 2.1 պահանջվող տեղեկատվությունը և հայտը գնահատել է բավարար, սակայն ըստ հրավերի 7.9 կետի՝ այն է Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.10 Եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Տվյալ դեպքում հանձնաժողովը չի կասեցրել նիստը և շտկման պահանջ չի ներկայացրել ընկերությանը և եթե վերը հիշատակված 7.9 կետում նշված ժամկետում շտկում չկատարվեր ապա հայտը պետք է գնահատվեր անբավարար, ուստի հանձնաժողովը չի պահպանել հրավերի 4-րդ մասի 9-րդ կետի և ՀՀ գնումների մասին օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի բ կետի և ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի թ ենթակետի պահանջները, այն է. «այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իյուականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում: Պատվիրատուն խախտելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և հրավերի 8-րդ մասի 4-րդ կետը՝ այն է Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվուծի 1-ին մասի.

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի.

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 50-րդ հոդվածի, 28-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի և ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի «թ» ենթակետի դրույթներով՝ Բողոքներ քննող անձից խնդրել են,

- Դադարեցնել սոցիալական ապահովության ծառայության 22.04.2019թ.-ի թիվ 3 «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով արձանագրությամբ «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ին 1-ին տեղ զբաղեցնելու որոշումը,

- Պարտավորեցնել շտկում ուզել «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ից, կամ «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ի հայտը համարել անբավարար:

3. <u>Սոցիալական ապահովության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.04.2019թ. գրությամբ դիմել է Սոցիալական ապահովության ծառայությանը՝ հնարավորություն տալով «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն՝ 2019 թվականի ապրիլի 25-ին «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/19 բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«2019 թվականի մարտի 4-ին Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է Ծառայության կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք ընկերություն՝ այդ թվում Վահե Խաչատրյան Հայկի Ա/Ձ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Հայտի բավարար գնահատելու հիմքում ընկած իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը, հայտը գնահատել է բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերի հավելված 2.1-ով (տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին) ներկայացվող տվյալներից՝ 2-րդ սյունյակի գլխագրում նշված տեղեկատվությունը «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը» սյունյակում լրացված թվանշանները նույնականացվում են նույնականացման քարտի թվանշանների քանակի հետ, միաժամանակ հաշվի առնելով, որ գլխագրում գրված պահանջը բովանդակային առումով կատարված է «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի համարը» և «նույնականացման քարտ» կամ «անձնագիր» անվանումը պարտադիր նշելու պահանջը չկա:

Հրավերի 1-ին մասի՝

7.4 կետի համաձայն՝ «Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:»:

7.9 կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն …. Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում (գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ), եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,:

7.10 կետի համաձայն՝ «Եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»:

Հարկ եմ համարում նշել նաև հրավերի 1-ին մասի 7.15 կետի համաձայն՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսինքն ըստ էության Ընկերությունը բովանդակային առումով կատարել է իր վրա դրված պարտականությունը և Ընկերության հայտը գնահատվել է բավարար:»:

Ելնելով վերոնշյալից Պատվիրատուն գտել է, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.04.2019թ. հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ն հրավերի թիվ 2.1՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալների, հավելվածով՝ որպես ՀՀ քաղաքացիների համար նույնականացման քարտի կան անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը նշել է 002944098 համարը:

Հրավերի պահանջներին բավարարող հայտեր են ներկայացրել «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն՝ 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» Ա/Ձ-ն՝ 1 288 000 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով և «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ն՝ 390 600 /երեք հարյուր ինսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով:

«ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ գբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ն, 2-րդ տեղ՝ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» Ա/Ձ-ն և 3-րդ տեղ՝ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովի 22.04.2018թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վահե Խաչատրյան Հայկի» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին, իսկ «թ» պարբերության համաձայն՝ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը, հայտը գնահատել է բավարար այն հիմնավորմամբ, որ հրավերի հավելված 2.1-ով (տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին) ներկայացվող տվյալներից՝ 2-րդ սյունյակի գլխագրում նշված տեղեկատվությունը «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը» սյունյակում լրացված թվանշանները նույնականացվում են նույնականացման քարտի թվանշանների քանակի հետ, միաժամանակ հաշվի առնելով, որ գլխագրում գրված պահանջը բովանդակային առումով կատարված է «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի համարը» և «նույնականացման քարտ» կամ «անձնագիր» անվանումը պարտադիր նշելու պահանջը չկա:

Հրավերի 1-ին մասի՝

7.4 կետի համաձայն՝ «Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:»:

7.9 կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

Գնահատող հանձնաժողովն, օգտվելով մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնելու իր իրավունքից գտել է, որ ըստ էության Ընկերությունը բովանդակային առումով կատարել է իր վրա դրված պարտականությունը, այն է՝ ներկայացրել է մասնակցի իրական շահառուների

մասին տվյալները, որոնք նույնականացվում են նույնականացման քարտի թվանշանների քանակի հետ՝ ինչի պայմաններում Ընկերության հայտը գնահատվել է բավարար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից 25.04.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ